ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան

06.02.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ՍՑ-ԱՄ-2017/79

Հայաստանի Հանրապետության գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ նաև՝ Խորհուրդ) ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 28.11.2017թ. թիվ 03/26-3/21761-17 գրությամբ «Թի Էմ Ջի գրուպ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը 28.11.2017թ. թիվ 03/26-3/21761-17 գրությամբ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդում նախաձեռնել է «Թի Էմ Ջի գրուպ» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ նաև՝ Ցուցակ) ներառելու պաշտոնական ընթացակարգ:

2. **<u>«Թի Էմ Ջի գրուպ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

Խորհուրդը, կարծիք ստանալու նպատակով 28.11.2017թ. թիվ ԳԲԽ-ՄԱ/1/21787-17 գրությամբ, ինչպես նաև էլեկտրոնային եղանակով դիմել է Ընկերությանը:

«Թի Էմ Ջի գրուպ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 01.12.2017թ. ժամը 11:00-ի և 23.01.2018թ. ժամը 10:20-ի նիստերի վերաբերյալ, 23.01.2018թ. ժամը 10:20-ի նիստին ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով խնդրել է հետաձգել նիստը պատճառաբանելով, որ համապատասխան հայցադիմում է ներկայացրել դատարան, որի շրջանակներում ներկայացրել է նաև Ընկերությանը Ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգը կասեցնելու վերաբերյալ հայցի ապահովում կիրառելու միջնորդություն:

Ընկերության կողմից 25.01.2017թ. Խորհդին ներկայացվել է գրավոր դիրքորոշում, որտեղ նշվել է, որ 06.11.2017թ. ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության կողմից հաստատվել է «Թի Էմ Ջի գրուպ» ՍՊԸ-ի կանոնադրությունը նոր խնբագրությամբ, որտեղ որպես Ընկերության մասնակիցներ նշվել են Գոռ Մկրտչյանի (50% բաժնեմաս) և Մարիամ Մանուկյանի (50 % բաժնեմաս) անունները, որից հետո Ընկերության տնօրենն առանց ընդհանուր ժողովի համապատասխան որոշման հայտ է ներկայացրել «ՀՀ ՖՆ-ԳՀԾՁԲ-17/10» ծածկագրով գնման ընթացակարգին, որն ըստ էության հանդիսանում է խոշոր գործարք: Եվ քանի որ Ընկերության տնօրենը առանց ընդհանուր ժողովի որոշման կատարել է խոշոր գործարք, ուստի կարելի է պնդել, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 304-րդ հոդվածի 1-ին մասի ուժով այն անվավեր է կնքման պահից, հետևաբար Ընկերությանը Ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

3. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 22.11.2017թ. թիվ 1/18-3/[1191465]-17 գրությամբ հայտնել է, որ ՀՀ ֆինանսների նախարարության կարիքների համար կազմակերպված «ՀՀ ՖՆ-ԳՀԾՁԲ-17/10» ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ նաև՝ Ընթացակարգ) մասնակցի՝ «Թի Էմ Ջի գրուպ» ՍՊԸ-ի

մոտ ի հայտ են եկել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված հիմքերը. մասնակիցը խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը (Ընկերությունը չի ապահովել հայտով իր կողմից ստանձնած «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշը՝ նախորդ երեք տարիների համախառն եկամուտը պակաս է գնային առաջարկից):

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 01.12.2017թ. ժամը 11:00-ի 23.01.2018թ. ժամը 10:20-ի նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. ՍՑ-ԱՄ-2017/79 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ՍՑ-ԱՄ-2017/79 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից ՀՀ ֆինանսների նախարարության կարիքների համար կազմակերպվել է «ՀՀ ՖՆ-ԳՀԾՁԲ-17/10» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով «Թի էմ Ջի գրուպ» ՍՊԸ-ն 09.11.2017թ. հայտ է ներկայացրել:

2. Ընկերությունը հայտի թիվ 4 հավելվածով ներկայացրել է գնային առաջարկ, որի ընդհանուր գինը կազմել է 21 300 000 ՀՀ դրամ:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 10.11.2017թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 2 արձանագրության 4-րդ կետի 1-ին ենթակետով կայացված որոշմամբ Ընկերությունը ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

4. ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով և 44-րդ կետով սահմանված կարգով 14.11.2017թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ «Թի էմ Ջի գրուպ» ՍՊԸ-

ի հայտը ներկայացվելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը կազմում է 4 258 500 ՀՀ դրամ:

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 16.11.2017թ. ժամը 09:30-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ որոշել է ծանուցել Ընկերությանը «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշում արձանագրված անհամապատասխանությունը շտկելու վերաբերյալ:

6. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 18.11.2017թ. ժամը 09:30-ի նիստի թիվ 4 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Թի Էմ Ջի գրուպ» ՍՊԸ-ի հայտը մերժվել է «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշում արձանագրված անհամապատասխանությունը չշտկելու հիմքով:

5. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

Խորհուրդն, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 28.11.2017թ. թիվ 03/26-3/21761-17 և 22.11.2017թ. թիվ 1/18-3/[1191465]-17 գրությունները և կից փաստաթղթերը, հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Նույն հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը պաշտոնական ընթացակարգ է նախաձեռնում գնումների բողոքարկման խորհրդում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների բողոքարկման խորհուրդը որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը որոշում է կայացնում մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:

Կարգի 44-րդ կետի համաձայն՝ Կոմիտեն սույն կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Սույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը

համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից: Սույն կետով նախատեսված որակավորման չափանիշի գնահատման ժամանակ հաշվի է առնվում սույն կարգի 47-րդ կետով նախատեսված ընթացակարգը:

Կարգի 47-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված՝ ներառյալ կոմիտեի կողմից տրամադրված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Կարգի 48-րդ կետի 2-րդ ենթակետը սահմանում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Կարգի 63-րդ կետի 1-ին ենթակետի «ա» պարբերության համաձայն՝ մասնակիցների՝ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետով նախատեսված՝ «Ֆինանսական միջոցներ» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝ հրավերով պահանջվում է, որ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցը, բացառությամբ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի, հայտով ներկայացնում է հայտարարություն այն մասին, որ իր կողմից հայտը ներկայացվելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս չէ ներկայացված գնային առաջարկից:

«Թի Էմ Ջի գրուպ» ՍՊԸ-ն 09.11.2017թ. հայտ է ներկայացրել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից կազմակերպված «ՀՀ ՖՆ-ԳՀԾՁԲ-17/10» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին:

Ընկերությունը հայտի թիվ 4 հավելվածով ներկայացրել է գնային առաջարկ, որի ընդհանուր գինը կազմել է ***21 300 000 ՀՀ դրամ:***

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 10.11.2017թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 2 արձանագրության 4-րդ կետի 1-ին ենթակետով կայացված որոշմամբ Ընկերությունը ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի հիման վրա, 13.12.2017թ. «Թի Էմ Ջի գրուպ» ՍՊԸ-ի վերաբերյալ հարցում է ներկայացրել ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե, որին ի պատասխան՝ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից 14.11.2017թ. տրամադրվել է եզրակացության, համաձայն որի՝ «Թի Էմ Ջի գրուպ» ՍՊԸ-ի հայտը ներկայացվելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը կազմում է ***4 258 500 ՀՀ դրամ:***

Հիմք ընդունելով Կարգի 44-րդ և 47-րդ կետերի դրույթները, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը կասեցրել է նիստը, առաջարկելով Ընկերությանը մեկ աշխատանքային օրյա ժամկետում շտկել արձանագրված անհամապատասխանությունը, որը սակայն Ընկերության կողմից չի շտկվել:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 18.11.2017թ. ժամը 09:30-ի նիստի թիվ 4 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Թի Էմ Ջի գրուպ» ՍՊԸ-ի հայտը մերժվել է:

Այսպես, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետը սահմանում է, որ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշները: Մասնակիցը ***պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող ֆինանսական միջոցներ:***

Օրենքի 28-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ հրավերում նախատեսվում է նաև, որ մասնակիցը՝գնումներին մասնակցելու իր իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորելու համար հայտով ներկայացնում է իր հաստատած հայտարարությունը, պայմանով, որ մասնակիցը պարտավորվում է սույն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով ներկայացնել հայտարարությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

«ՀՀ ՖՆ-ԳՀԾՁԲ-17/10» ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանվել է, որ «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշը սահմանվում և գնահատվում է հետևյալ կարգով. Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի, բացառությամբ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի, հայտը ներկայացնելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը չպետք է պակաս լինի սույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկից:

Ընկերությունը հայտի թիվ 3 հավելվածով հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀՀ ՖՆ-ԳՀԾՁԲ-17/10» ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված որակավորման չափանիշների պահանջներին և պարտավորվում է առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում նշված ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել որակավորումը հիմնավորող՝ հրավերով պահանջվող փաստաթղթերը:

Մինչդեռ Խորհուրդն արձանագրում է, որ «Թի Էմ Ջի գրուպ» ՍՊԸ-ն «ՀՀ ՖՆ-ԳՀԾՁԲ-17/10» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում չի բավարարել

«Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշը, քանի որ Ընկերության հայտը ներկայացվելուն (2017թ.) նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը, որը համաձայն ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից տրված եզրակացության կազմել է ***4 258 500 ՀՀ դրամ,*** պակաս է եղել ներկայացված գնային առաջարկից ***(21 300 000 ՀՀ դրամ):***

Այս կապակցությամբ ՀՀ ֆինանսների նախարարությունը, որպես «Գնումների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 13-րդ կետով նախատեսված լիազորված մարմին, «Գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության մեջ տարաբնույթ ընկալվող դրույթների վերաբերյալ» 09.10.2017թ. թիվ Պ-2 պաշտոնական պարզաբանման մեջ նշել է, որ նկատի ունենալով, որ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն հրավերով սահմանված որակավորման չափանիշներին իր համապատասխանության վերաբերյալ, սակայն գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվում է, որ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը չի բավարարում հրավերով սահմանված որակավորման չափանիշների պահանջներին, ուստի այդ հանգամանքը դիտարկվում է որպես մասնակցի կողմից գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտում, ինչի արդյունքում դադարեցվում է այդ մասնակցի հետագա մասնակցությունը գնման գործընթացին և մասնակիցը ներառվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցը ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Այսպիսով՝ հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարի 09.10.2017թ. թիվ Պ-2 պաշտոնական պարզաբանումը, Խորհուրդը գտնում է, որ «Թի էմ Ջի գրուպ» ՍՊԸ-ն «ՀՀ ՖՆ-ԳՀԾՁԲ-17/10» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում թույլ է տվել Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պարտավորության խախտում:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անձը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետը՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 28.11.2017թ. թիվ 03/26-3/21761-17 գրությամբ «Թի Էմ Ջի գրուպ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 00471259) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգը բավարարել և «Թի Էմ Ջի գրուպ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կայացվելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի անդամ՝ **ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ**